

մէջ Տիրոսի եւ Սիդոնի. յետ որոյ եկին եւ այլ գունդք՝ ի Մեսսինեայ Սիկիլիոյ նաւեալք: Ընդ սոսա առաքէր Ենրիկոս զքարտուղար իւր Կոնրադ եպիսկոպոս⁵⁶, եւ ՚ի ձեռն նորա թագս ոսկեղէնս, պսակել զԼեւոն ՚ի թագաւոր Հայոց, եւ զԱմարի՝ ՚ի թագաւոր Կիպրոսի. քանզի եւ սա հանգոյն մերոյս առաքեալ էր դեսպան (զՌէնիէ տէր Ժիպլէի որ է Գաբաղ) խնդրել թագ եւ ընծայել մեծարանս:– Յելս կոյս ամսեան սեպտեմբերի (1197) եհաս քարտուղարն՝ մասամբ նաւատորմոյին ՚ի Կիպրոս, եւ եկեալ ՚ի Նիկոսիա՝ պսակեաց զԱմարի թագիւ, գաւազանաւ եւ սուսերբ, ըստ օրինի հրահանգացն, եւ ընկալաւ ՚ի դէմս կայսեր՝ զմեծարանսն: Արժան էր նմա անցանել անտուստ ՚ի Սիսուան եւ կատարել զմիւս եւս թագադրութիւնն. այլ թուէր իմն տատանել բաղդին Հայոց, եւ վրիպել զայս եւս նուագ, թէ եւ ոչ ընդ երկար: Քարտուղարն՝ որ առաջնորդ կարգեալ էր ՚ի կայսերէ եւ ՚ի Քահանայապետէն (Կելեստին. Գ) համօրէն Դ Խաչակրութեան, (որոյ նպատակն էր առումն Երուսաղեմի, որպէս եւ Փրետրիկեայն), քանզի ՚ի վերջ աշնայնի հասեալ էր եղանակն, փութայր ժամանել ՚ի գործն կարելոր, եւ թողլով առ յապա զթագադրութիւն Լեւոնի, նաւեալ գնայր ՚ի Պտղոմայիս առ Խաչակիրսն: Այսմ իրազեկ լեալ Լեւոնի, առաքեաց անդր հրեշտակս, առաջնորդ կարգեալ զՅովհաննէս՝ ճարտար արքեպիսկոպոսն Սսոյ, ըմբռնողն Գրիգորի Քարավիժի ՚ի Հռոմկլայ, ուր յետոյ եւ ամբարձաւ ՚ի գահ կաթողիկոսական, եւ երբեմն դիմադարձ իսկ եղել Լեւոնի, որպէս տեսցի յապայդ. եւ հրաւիրեցին յարքունիս Հայոց զառաքեալսն ՚ի կայսերէ, մինչ նոքա դեռ եւս զբաղեալք էին ՚ի յարդարել զգործ պատերազմին, եւ ոչ կարէին այլ իմիք միտ դնել: Սակայն մինչ չեւ խմբեալ եւ միաբանեալ անդր գնդից գնդից՝ մերձեցան աւուրք ձմերայինք, եւ ոչ համարեցան պատշաճ դիմել ՚ի Քաղաքն սուրբ. այլ խորհեցան, առ ՚ի չտալոյ պարապ այլազգեաց, կորզել ՚ի նոցանէ զԹորոն բերդ ամուր՝ զկառուցեալն ՚ի կատար լեռնաբլրի. եւ մինչ դեգերէինն յայն գործ պաշարման, անկաւ ՚ի նոսա երկպառակութիւն, այլ եւ խէթ մատնութեան Տաճարական ասպետաց: Վասն որոյ նախ ինքն քարտուղարն Կոնրադ՝ ժողովեալ զամբարս բանակին՝ թիկունս դարձոյց, երթալ անկանել ՚ի մի յերկոցուն ամուր քաղաքաց՝ զոր ունէին քրիստոնեայքն, ՚ի Պտղոմայիս

⁵⁶ Կոնրադ՝ նախ եպիսկոպոս էր Լիւպէքայ, ապա Հիլտեսհայմի, յետոյ գրաւեաց զաթոռ Վիւրցպուրկի. վասն որոյ կոչեցեալ ՚ի Հռովմ՝ եգիտ թողութիւն եւ հաստատեցաւ ՚ի նոյն. † յամի 1202: